

5.25. Թափոնների առաջացումը, օգտագործումը և հեռացումը 2002 թվականին

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, 2002թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվետու կազմակերպությունների թափոնակուտակիչներում եղել է 389.9 հազ. տ թափոն, առավելապես՝ վտանգավորության 5-րդ դասի:

2002թ. ընթացքում առաջացել է 327.8 հազ. տ թափոն, որից 1.2 հազ. տ կամ 0.4%-ը վտանգավորության 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ դասերի, 318.6 հազ.տ կամ 97.2%-ը՝ վտանգավորության 5-րդ դասի, 8.0 հազ. տ կամ 2.4%-ը՝ կենցաղային թափոններ:

Մեկ բնակչի հաշվով առաջացած թափոնների քանակը կազմել է 102.1 կգ, մեկ քառ. կմ-ի հաշվով (առանց Սևանա լճի հայելու մակերեսի՝ 1240.5 քառ.կմ /2002թ. միջինը/՝ 11.5 տ, թափոնների առաջացում ունեցած մեկ հաշվետու կազմակերպության հաշվով՝ 509.8 տ:

Առաջացած թափոնների քանակական տեսակարար ցուցանիշներն ըստ մարզերի

	Առաջացել են թափոններ			
	ընդամենը, տ	մեկ բնակչի հաշվով, կգ	մեկ քառ. կմ-ի հաշվով, կգ*	մեկ կազմակերպության հաշվով, տ
ք.երևան	7645.1	6.9	33678.8	21.2
Արագածոտն	38.7	0.3	14.1	4.3
Արարատ	116.7	0.4	55.7	16.7
Արմավիր	308.6	1.1	248.5	8.3
Գեղարքունիք	1090.7	4.6	265.5	14.0
Լոռի	27324.8	95.6	7211.6	700.6
Կոտայք	54676.7	200.6	26173.6	5467.7
Շիրակ	5706.4	20.2	2128.4	103.7
Սյունիք	230380.0	1507.7	51127.4	230380
Վայոց ձոր	42.4	0.8	18.4	21.2
Տավուշ	527.5	3.9	195.1	12.0
Ընդամենը ՀՀ	327857.6	102.1	11502.8	509.8

* Առանց Սևանա լճի մակերեսի:

2002թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմակերպությունների տարածքում կուտակված թափոնների ընդհանուր քանակը կազմել է 680.2 հազ.տ, առավելապես՝ վտանգավորության 5-րդ դասի: Այլ կազմակերպություններից ստացված թափոնների քանակը կազմել է 0.7 հազ. տ: Այլ կազմակերպություններին տրված թափոնների քանակը կազմել է 5.7 հազ.տ: Կազմակերպությունների կողմից վնասագերծվել և ոչնչացվել է 0.9 հազ. տ թափոն: Թափոնակուտակիչներ է տեղափոխվել 30.6 հազ. տ թափոն, օգտագործվել՝ 1.1 հազ. տ թափոն:

Թափոնների քանակական շարժը

(տոննա)

Թափոնների վտանգավորության դասը	Տրվել է այլ կազմակերպությունների	Վնասագերծվել և ոչնչացվել է կազմակերպության կողմից	Տեղափոխվել է թափոնակուտակիչներ կազմակերպության միջոցներով	Օգտագործվել է
1-ին դասի	-	-	0.5	-
2-րդ դասի	3.0	805.5	-	-
3-րդ դասի	-	-	0.02	-
4-րդ դասի	204.0	0.5	3.6	-
5-րդ դասի	192.3	49.9	27271.8	1091.6
կենցաղային թափոն	5345.7	17.9	3307.8	19.0
Ընդամենը	5745.0	873.8	30583.7	1110.6

Թափոնների քանակական շարժն ըստ մարզերի

(տոննա)

	Տրվել է այլ կազմակերպությունների	Վնասագերծվել և ոչնչացվել է կազմակերպության կողմից	Տեղափոխվել է թափոնակուտակիչներ կազմակերպության միջոցներով	Օգտագործվել է
ք.Երևան	4757.2	811	1244.4	536.9
Արագածոտն	-	-	38.7	-
Արարատ	1.45	-	664	-
Արմավիր	86.3	-	192.8	29.5
Գեղարքունիք	771.9	2.8	468.8	-
Լոռի	47.9	14	27128.9	8.0
Կոտայք	-	-	412.9	-
Շիրակ	37.3	-	128.4	360.0
Սյունիք	-	-	-	-
Վայոց ձոր	-	42.4	-	-
Տավուշ	42.9	3.6	304.8	176.2
Ընդամենը ՀՀ	5745.0	873.8	30583.7	1110.6

Թափոնների շարժի հետ կապված ընդհանուր ծախսումները 2002թ. կազմել են 169.5 մլն. դրամ: Ծախսումներն այդպիսի աշխատանքներ իրականացրած մեկ կազմակերպության հաշվով կազմել են 263.6 հազ. դրամ:

2002թ. ընդհանուր դրամական մուտքերը կազմել են 9.7 մլն. դրամ: Թափոնների հետ առնչվող դրամական մուտքեր ունեցող մեկ կազմակերպության հաշվով այն կազմել է 15.1 հազ. դրամ:

Դրամական ծախսումներն ու մուտքերն ըստ ուղղությունների

(հազ. դրամ)

	Ընդամենը	որից՝ վտանգավոր թափոնների
Դրամական ծախսումներ	169512.6	33448.4
այդ թվում՝		
վնասագերծման և ոչնչացման	5.1	-
վերաօգտագործման նախապատրաստման	32877.8	32872.4
թափոնակուտակիչներ տեղափոխման և տեղադրման	53678.0	-
վճարումներ այլ կազմակերպություններին տրված թափոնների դիմաց	82951.7	576.0
Դրամական մուտքեր	9675.1	-
այդ թվում՝		
այլ կազմակերպություններից՝ նրանց թափոնների ընդունման դիմաց	895	-
այլ կազմակերպություններից՝ իրենց թափոնները նրանց տրամադրելու դիմաց	236.1	-
թափոնների վերամշակումից ստացված արտադրանքի իրացումից	8544	-

Դրամական ծախսումներն ու մուտքերն ըստ մարզերի

(հազ. դրամ)

	Ծախսումները	Մուտքերը	Մեկ կազմակերպության հաշվով	
			ծախսումները	մուտքերը
ք.Երևան	120154.4	172.0	332.8	0.5
Արագածոտն	-	-	-	-
Արարատ	-	-	-	-
Արմավիր	23.3	-	0.6	-
Գեղարքունիք	4844.5	-	62.1	-
Լոռի	38168.4	459.1	978.7	11.8
Կոտայք	3148.5	-	314.8	-
Շիրակ	168.3	8544.0	3.1	155.3
Սյունիք	-	-	-	-
Վայոց ձոր	-	-	-	-
Տավուշ	3005.2	500.0	68.3	11.4
Ընդամենը ՀՀ	169512.6	9675.1	2633.6	15.0